

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից

01.01.2019-30.06.2019 թվականների ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից գրանցվել և հաշվառվել է 3582 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, 67 փակ բաժնետիրական ընկերություն, 1 բաց բաժնետիրական ընկերություն, 1 պետական ոչ առևտրային կազմակերպություն, 19 համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, 3 գյուղատնտեսական կոոպերատիվ, 6 արտադրական կոոպերատիվ, 38 առանձնացված ստորաբաժանում 12292 անհատ ձեռնարկատեր, որից 1931 վերահաշվառվել է: Նույն ժամանակահատվածում գրանցվել է թվով 304 հասարակական կազմակերպություն, 1 կուսակցություն, 39 հիմնադրամ, 11 արհեստակցական կազմակերպություն, 9 պետական մարմին, 8 հիմնարկ, 12 սպառողական կոոպերատիվ, 12 համատիրություն: Իրականացվել են միացման ճանապարհով վերակազմակերպմամբ պայմանավորված թվով 6 իրավաբանական անձանց փոփոխությունների և վերակազմակերպման արդյունքում թվով 6 իրավաբանական անձանց գործունեության դադարման պետական գրանցումներ, առանձնացման ճանապարհով վերակազմակերպմամբ պայմանավորված թվով 12 իրավաբանական անձանց փոփոխությունների և վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված թվով 19 իրավաբանական անձանց պետական գրանցումներ, Միաձուլման ճանապարհով վերակազմակերպմամբ պայմանավորված թվով 2 իրավաբանական անձանց գործունեության դադարման և վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված թվով 1 իրավաբանական անձի պետական գրանցումներ: Իրականացվել է առևտրային կազմակերպության փոփոխությունների 4464 գրանցում, անհատ ձեռնարկատերերի փոփոխությունների 3793 հաշվառում, անհատ ձեռնարկատերերի հաշվառումից հանում 3136 և իրավաբանական անձանց լուծարման 287 գրանցում և հաշվառում: Բոլոր գրանցումներն ու հաշվառումները կատարվել են օրենքով սահմանված

ժամկետներում: Իրականացվել է նաև իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից մեկ սուբյեկտի վերաբերյալ պետ. ռեգիստրում պահվող տեղեկությունների տրամադրում՝ 4248, որից 1984 առցանց:

Հաշվառվել է 1 լրատվամիջոց:

Հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը իրականացրել է www.azdarar.am կայք էջերի վարումը և հրապարակել է 58081 հայտարարություն:

Հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը իրականացրել է www.e-register.am կայք էջերի վարումը:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցել է ապահովված 1647 իրավունք և տրամադրել 150 քաղվածք:

30.06.2019թ. դրությամբ գրանցված են՝

Կազմակերպչիրավական տեսակ	Քանակ
Անհատ ձեռնարկատեր (Ա/Ձ)	110918
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)	55168
Հասարակական կազմակերպություն (ՀԿ)	4442
Անհատական ձեռնարկություն (Ա/Ձ)	2956
Արտադրական կոոպերատիվ (Ա/Կ)	2857
Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	2623
Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)	1869
Հիմնարկ (ՀՄ)	1773
Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ)	1420
Առանձնացված ստորաբաժանում (ԱՍ)	1831
Հիմնադրամ (ՀՄԴ)	1145
Բաց բաժնետիրական ընկերություն (ԲԲԸ)	722
Համատիրություն (ՀՄՏ)	667
Արհեստակցական կազմակերպություն (ԱՐՀԿ)	651
Լիակատար (տնտեսական) ընկերակցություն (Լ(Տ)Ը)	563
Դուստր ձեռնարկություն (Դ/Ձ)	493
Սպառողական կոոպերատիվ (Ս/Կ)	457
Պետական (իշխանության տեղական մարմնի) ձեռնարկություն (Պ/Ձ)	220
Իրավաբանական անձանց միություն(ոչ առևտրային) (ԻԱՄ)	231
Գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն (Գ/ԿՏ)	140

Կուսակցություն (ԿՍ)	82
Գյուղատնտեսական կոոպերատիվ (Գ/Կ)	78
Համայնքային կառավարչական հիմնարկ	59
Կրոնական կազմակերպություն (ԿԿ)	52
Պետական մարմին (ՊՄ)	41
Գործատուների միություն (ԳՄ)	34
Զրոգտագործողների ընկերություն (ԶԸ)	18
Առևտրա-արդյունաբերական պալատ	9

01.01.2019-01.07.2019թթ. ընկած ժամանակահատվածում

	ԱՁ սկզբնական գրանցում	Նախկինում ԱՁ հաշվառված անձի կրկին հաշվառում	ԱՁ հաշվառումից հանում	ՍՊԸ սկզբնական պետական գրանցում	ՍՊԸ լուծարում
01.01.2019-01.02.2019	1448	312	540	474	26
01.02.2019-01.03.2019	1806	336	470	696	50
01.03.2019-01.04.2019	1817	340	525	609	22
01.04.2019-01.05.2019	1940	377	591	612	25
01.05.2019-01.06.2019	1810	307	550	583	27
01.06.2019-01.07.2019	1540	259	460	608	35


01.01.2019-30.06.2019թ.թ.

գրանցված ՍՊԸ-ների շարժը և գրանցման տևողությունը

ԻԱ տեսակ	չափի միավոր	15-ից 30 րոպե	30-ից 60 րոպե	60 րոպեից ավել
Ստանդարտ կանոնադրությամբ ՍՊԸ գրանցում	հատ	2735	191	100


Բաշխվածությունը ըստ մարզերի

Անհատ Ձեռնարկատերերի բաշխվածությունը ըստ մարզերի



Առևտրային կազմակերպությունների բաշխվածությունը ըստ մարզերի

Մարզեր	Քանակ
ԵՐԵՎԱՆ	37189
ԿՈՏԱՅՔ	3247
ԱՐԱՐՄՏ	1969
ԼՈՌԻ	1966
ԱՐՄԱՎԻՐ	1611
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	1581
ՇԻՐԱԿ	1519
ՍՅՈՒՆԻՔ	1417
ԱՐԱԳԱԾՈՏՆ	975
ՏԱՎՈՒՇ	814
ՎԱՅՈՑ ՁՈՐ	560



Օտարերկրյա ներդրումների վիճակագրություն

